

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵԼԻՔ ՀՈՎՍԵՓԻ

**ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ
ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
1964-1991 ԹԹ.**

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա.Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
ԵԹԻՄՅԱՆ Գ.Լ.

պատմական գիտությունների թեկնածու
ՕՀԱՆԵԱՆ Ս.Տ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2020 թ. մարտի 10-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմություն 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հունվարի 31-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ՝

Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայրենիք-սփյուռք հարաբերությունները երկկողմ մեծ կարևորություն են ունեցել վերջին 100 տարիներին: Այդ ընթացքում հայրենիքում ստեղծվել են սփյուռքի հետ կապերի իրականացման համար պատասխանատու մարմիններ, որոնք զգալի ներդրում են ունեցել այդ կապերի զարգացման, հայրենիք-սփյուռք փոխադարձ աջակցության, սփյուռքահայության շրջանում հայապահպանության ծրագրերի իրականացման և այլ կարևոր հարցերում: Այդ մարմինների մեջ աշխատանքների բազմազանությամբ ու խորությամբ աչքի է ընկել 1964 թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե), որի գործունեության մոտ 30 տարիների ընթացքում հայրենիք-սփյուռք կապը մեծ չափով ամրապնդվեց: Կոմիտեի գործունեության շրջանում սփյուռքում առաջացել էր հայապահպանության ծրագրերի մշակման և իրականացման անհետաձգելի անհրաժեշտություն, քանի որ օտար մշակույթների ազդեցության, խառը ամուսնությունների և այլ պատճառներով ծուլման գործընթացները մեծ ծավալներ էին ընդգրկում հայկական սփյուռքում: Դրա պատճառով էլ Կոմիտեի ստեղծման նախաձեռնողների և գործունեության աջակցողների մեջ էին նաև հայապահպանության անհրաժեշտությունը գիտակցող հայ մտավորականները (Մարտիրոս Սարյան, Պարույր Սևակ, Սիլվա Կապուտիկյան, Գևորգ Էմին, Վահագն Դավթյան և այլն), որոնք մտահոգված էին սփյուռքում տիրող իրավիճակով և համոզված էին, որ եղած խնդիրների կարգավորման գործում անհրաժեշտ է Խորհրդային Հայաստանի միջամտությունը:

Խորհրդային շրջանում, չնայած գաղափարաքաղաքական և այլ սահմանափակումների, Կոմիտեի աշխատանքը արդյունավետ էր. այդ ժամանակ հայրենիք-սփյուռք կապը ամրապնդվեց, իրականացվեցին փախադարձ ծրագրեր, միջոցառումներ, և Խորհրդային Հայաստանը սփյուռքի համար դարձավ ավելի հասանելի: Այդ ժամանակ Խորհրդային Հայաստանը սկսեց մեծ չափով օգնել սփյուռքահայերին՝ օտար երկրներում հայապահպանության խնդիրները հաղթահարելու և գոյատևելու համար: 1985 թվականից հետո, երբ սկիզբ առավ «վերակառուցման» գործընթացը ԽՍՀՄ-ում, իրավիճակը փոփոխվեց, և Կոմիտեի աշխատանքների վրա այդ փոփոխությունները ազդեցին այն առումով, որ սփյուռքի հետ հարաբերություններում եղած սահմանափակումները աստիճանաբար վերացան, բայց աշխատանքների թափը թուլացավ:

Կոմիտեի գործունեության առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես Մերձավոր Արևելքի արաբական պետությունների (Սիրիա, Լիբանան, Իրաք, Քուվեյթ, Հորդանան, Եգիպտոս) հայաշատ համայնքները, քանի որ նրանք իրենց նշանակությամբ հատկապես լիբանանահայ և սիրիահայ համայնքները կարևոր տեղ էին զբաղեցնում ողջ հայկական սփյուռքում և, բացի այդ, գտնվում էին անընդհատ սրվող իսրայելյա-արաբական հակամարտության գոտում՝ դրանից բխող հետևանքներով: Այդ համայնքները, փաստորեն, բացի հայապահպանության հարցից, գտնվում էին այնպիսի պետություններում, որոնք 1960-1970-ական թթ. պատերազմական վիճակի մեջ էին, որով վտանգի տակ էր ընկնում նաև հայության ֆիզիկական գոյությունը: Բայց Կոմիտեն

նույնիսկ այդ վիճակում ներդնում էր բոլոր ջանքերը՝ Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքներին օգնելու համար:

Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ կարելի է պնդել, որ նշված երկրների հայ համայնքների հետ Կոմիտեի համագործակցության ուսումնասիրությունը կարող է այժմեական և կարևոր լինել հայապահպանության խնդիրներ ունեցող և վտանգված հայ համայնքների հետ աշխատանքներում նախկին փորձը հաշվի առնելու տեսակետից:

Կոմիտեի համագործակցությունը Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ ունի շատ հետաքրքիր կողմեր և դրսևորումներ, որոնք վերլուծության կարևոր առարկա են և ունեն գիտական նշանակություն ու արդիական հնչեղություն:

Թեմայի գիտական ամբողջական ու խորքային ուսումնասիրությունը կլրացնի հայրենիք-սփյուռք հարաբերությունների պատմության գիտական ուսումնասիրությունները: Բացի այդ, այժմ, երբ դրված է հայրենիք-սփյուռք հարաբերությունների արդյունավետության բարձրացման հարցը, սփյուռքում առկա է հայապահպանության լուրջ խնդիր, և հայկական տարբեր համայնքներ վտանգի տակ են, նման ուսումնասիրությունը կարող է նպաստել խնդիրների լուծման եղանակների մշակման աշխատանքներին, քանի որ կարևորվում է անցյալի արդյունավետ փորձի ամբողջական ճանաչողությունը:

Չնայած ավաճին, մինչև օրս Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի գործունեությունը և աջակցությունը Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայաշատ համայնքներին առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը խորհրդային ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համագործակցության ամբողջական և խորքային ուսումնասիրությունն է:

Նպատակին հասնելու համար խնդիր է դրված.

1. լուսաբանել Կոմիտեի ստեղծման նպատակները և խնդիրները,
2. ներկայացնել Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները,
3. բացահայտել նրա գործունեության գաղափարական, կազմակերպչական, համայնքներում և տարածաշրջանում տիրող իրավիճակից բխող խոչընդոտները,
4. ներկայացնել Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների վիճակը ըստ Կոմիտեի և այլ արխիվային փաստաթղթերի, քանի որ դրանով բացահայտվում են սփյուռքին վերաբերող խորհրդային հայեցակետերը, սփյուռքի ճանաչողության խորհրդային եղանակը, ինչպես նաև պատմական այն միջավայրն ու գաղափարաբաղադրական պայմանները, որոնցում գործում էր Կոմիտեն,
5. քննության առնել Կոմիտեի համագործակցությունը ըստ մերձավորարևելյան արաբական պետությունների հայ համայնքների,
6. ներկայացնել համագործակցության արդյունքներին վերաբերվող թվային տվյալներ:

Ուսումնասիրության աշխարհագրական և ժամանակագրական շրջանակները: Ուսումնասիրության առարկան խորհրդային շրջանում Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ Կոմիտեի համագործակցությունն է: Քննության

են առնվել Կոմիտեի հարաբերությունները մերձավորարևելյան տարածաշրջանի արաբական պետությունների հայ համայնքների հետ: Իսկ ինչ վերաբերում է Երուսաղեմին, ապա ատենախոսության մեջ Հորդանանի հայ համայնքի հետ Կոմիտեի համագործակցության բաժնում խոսվում է նաև Երուսաղեմի հայության հետ համագործակցության մասին, քանի որ մինչև 1967 թ. քաղաքի հայաշատ հատվածը մտնում էր Հորդանանի մեջ:

Ժամանակագրական շրջանակ է սահմանվել 1964-1991 թթ., այսինքն՝ Կոմիտեի գործունեության խորհրդային փուլը: Այդ ընթացքում, կապված Արցախյան ազատամարտի, 1988 թ. երկրաշարժի հետևանքների վերացման քաղաքականության, ինչպես նաև ՀՀ քաղաքական անկախության վերականգնման գործընթացի հետ, Կոմիտեի աշխատանքների բովանդակությունը էապես փոխվեց:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը մի կողմից վերաբերվում է առայժմ առանձին ու խորքային ուսումնասիրության առարկա չեղած հարցերի գիտական ուսումնասիրությանը, իսկ մյուս կողմից նախկինում թեմային վերաբերվող որոշակի խնդիրների (հայրենիք-սփյուռք կապեր, համագործակցություն, փոխադարձ աջակցություն և այլն) նորովի ուսումնասիրությանը, քանի որ, չնայած Կոմիտեի գործունեությանը վերաբերվող փաստերի վերհանման ծավալուն աշխատանքին, այդ կապերի գիտական լուսաբանումը անցյալում կատարվել էր խորհրդային շրջանում պարտադիր գաղափարաբանական դիրքերից և համապատասխան սկզբունքներով:

Փաստացի ուսումնասիրվել է հիմնահարց (Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համագործակցությունը 1964-1991 թթ.), որը նախկինում առանձին վերլուծության չէր ենթարկվել, և նորովի ուսումնասիրվել է հիմնահարց (Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը ընդհանրապես), որը նախկինում ուսումնասիրվել էր խորհրդային գաղափարաքաղաքական հայեցակետի շրջանակներում (սփյուռքի բաժանումը առաջադիմականների և հետադիմականների, նրա ընկալումը գաղափարաքաղաքական տեսանկյունից և այլն):

Գիտական նորույթի մասով կարևոր է, որ ատենախոսին հաջողվել է շրջանառության մեջ դնել Կոմիտեի գործունեությանը վերաբերվող բազմաթիվ փաստաթղթեր:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունը իրականացվել է վերլուծական (վերլուծական-համադրական) մեթոդի կիրառմամբ, որով կատարվել են թեմային վերաբերվող աղբյուրների և գիտական գրականության հավաքման, ըստ ենթաթեմաների բաժանման ու համակարգման, իրողությունների քննության, Կոմիտեի գործունեության լուսաբանման ու վերլուծության և ամփոփման փուլային աշխատանքներ:

Կիրառված մեթոդներից մյուսը պատմանկարագրողականն է, որով ատենախոսության տեքստը շարադրվել է ժամանակագրական և պատճառահետևանքային սկզբունքներով ու հաջորդականությամբ:

Պատմականության սկզբունքը սահմանվել է որպես նկարագրության մեթոդաբանական հիմք, երբ պատմական առանձին իրավիճակը ներկայացվել է

այնպես, ինչպես կար ժամանակակիցների ընկալումներում: Դա հիմնականում վերաբերվում է մերձավորարևելյան առանձին համայնքների ճանաչողությանը ըստ Կոմիտեի կամ խորհրդային դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցչությունների տեղեկանքների, որով հնարավոր է պատկերացում կազմել այն միջավայրի մասին, որում գործում էր Կոմիտեն, ինչպես նաև հայ համայնքների ճանաչողության այն ձևերին, որոնցով համայնքների պատկերը Կոմիտեին ներկայացվում էր ԽՍՀՄ-ի դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկների միջոցով:

Արենախոսության կիրառական նշանակությունը: Այսին աշխատությունը, բացի գիտականից, ունի նաև կիրառական նշանակություն: Ներկայացված հիմնադրույթները, վերլուծությունն ու եզրակացությունները կարող են օգտակար լինել ՀՀ բուհերում և գիտական հիմնարկներում սփյուռքին ու հայրենիք-սփյուռք հարաբերություններին նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում: Աշխատանքի արդյունքները կարող են նաև նպաստավոր լինել հայրենիք-սփյուռք հարաբերությունների արդի փուլում՝ անցյալ փորձը հաշվի առնելու և համապատասխան որոշումներ կայացնելու գործընթացում:

Արենախոսության փորձաքննությունը: Արենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության են երաշխավորել ԵՊՀ Սփյուռքագիտության և Հայոց պատմության ամբիոնները: Իսկ նրա հիմնական դրույթները ներկայացված են ատենախոսի հրատարակած 6 գիտական հոդվածներում:

Աղբյուրներ և գրականություն: Աշխատանքում օգտագործվել է աղբյուրային և աղբյուրագիտական ծավալուն նյութ: Հիմնական աղբյուրը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի արխիվն է¹, որտեղ պահպանված է Կոմիտեի գործունեությանը վերաբերվող համարյա ամբողջ նյութը: Աշխատանքը գրելիս օգտակար են եղել Կոմիտեի արխիվում պահվող՝ Կոմիտեի և տարբեր երկրների ԽՍՀՄ-դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարբեր տարիների տեղեկանքները սփյուռքահայ համայնքների մասին, Կոմիտեի գործունեության տարեկան ծրագրերը, հաշվետվությունները, համայնքներից ստացված տեղեկանք-նկարագրությունները, պաշտոնական գրագրությունը (Կոմիտեի ղեկավարների ու տարբեր համայնքային կազմակերպությունների և Կոմիտեի ու Խորհրդային Հայաստանի ղեկավարության միջև) և այլ կարևոր փաստաթղթեր:

Կոմիտեի և տարբեր երկրների ԽՍՀՄ-ի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տեղեկանքները սփյուռքահայ համայնքների պատմության կարևոր աղբյուրներ են, որոնց միջոցով հնարավոր է լուսաբանել սփյուռքի պատմության տարբեր հիմնահարցեր: Օրինակ, Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների մասին տեղեկանքները նպաստել են համայնքում տիրող իրավիճակի բացահայտման և Կոմիտեի ծրագրերի կարևորության և արդյունավետության լուսաբանման գործին: Կոմիտեն նաև համայնքներ էր ուղարկում հարցաթերթիկներ՝ տարբեր կազմակերպությունների կողմից լրացնելու համար, որոնցով իրականացվում էր համայնքների կարիքների գնահատում: Այդ հարցաթերթիկների և նշված

¹Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 875:

տեղեկանքների միջոցով համայնքների իրավիճակը դառնում էր ամբողջովին հասկանալի, իսկ սույն ատենախոսության առումով՝ կարևոր աղբյուր:

Արխիվում պահպանվել են նաև Կոմիտեի տարեկան (նաև անհրաժեշտ եղած դեպքում՝ երկու տարիների) հաշվետվությունները, որոնք ընդհանուր կերպով ներկայացնում են Կոմիտեի գործունեության արդյունքները: Այդ հաշվետվությունները հաճախ ներկայացնում են թվային պատկեր սփյուռքահայ համայնքներ այցելությունների, հայրենիք այցելողների, հրավերների, առաքումների և այլնի վերաբերյալ: Մյուս կողմից կարևոր են Կոմիտեի տարեկան գործունեության ծրագրերը, որով հնարավոր է ներկայացնել իշխանությունների կողմից Կոմիտեի առաջ դրված ընթացիկ խնդիրները:

Կոմիտեի ամենօրյա գրագրությունը ևս կարևոր նշանակություն ունի, որով պարզվում է սփյուռքի վերաբերմունքը հայրենիքի, Կոմիտեի աշխատանքների, իրականացվող ծրագրերի նկատմամբ: Նաև Կոմիտեի գրությունները Խորհրդային Հայաստանի իշխանություններին և ստացված պատասխանները հաճախ բացահայտում են Կոմիտեի և Խորհրդային Հայաստանի իշխանության մտեցումները սփյուռքի նկատմամբ:

Կոմիտեի գործունեության վերաբերյալ կարևոր նյութեր են պարունակվում նաև Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի մինիստրության (նախարարության) արխիվում²:

Արխիվային վերոհիշյալ նյութերի մի մասը հրատարակվել է առանձին կամ ժողովածուներով, որոնցից որոշները ներկայացնում են փաստաթղթերի քննական բնագրերը՝ ճշտումներով և հստակեցումներով: Հետաքրքրություն է ներկայացնում Գ. Յազըճյանի կազմած «Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)» փաստաթղթերի ժողովածուն, որտեղ ներկայացված են փաստաթղթեր սփյուռքահայ համայնավարների (կոմունիստներ), սփյուռքահայ ազգային կուսակցությունների, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի, Հայկական ժողովրդային շարժման, սփյուռքահայ տարբեր համայնքների (Գերմանիա, Հունաստան, Լիբանան, Սիրիա) մասին³: Հեղինակը մասամբ օգտվել է «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում հրատարակված արխիվային փաստաթղթերից, որոնք հրատարակել է Ա. Բաղայանը⁴: Գ. Յազըճյանին հաջողվել է ներկայացնել այդ փաստաթղթերի քննական բնագրերը:

Մեծ կարևորություն են ներկայացնում նաև Հայաստանի ազգային արխիվի կողմից հրատարակված փաստաթղթերի ժողովածուները Լիբանանի և Իրաքի հայ

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 326:

³ Տե՛ս «Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)», կազմ. Գ. Եազըճեան, Ե., 2016:

⁴ Տե՛ս Բաղայան Ա., ՍԴՀԿ-ի և ՌԱԿ-ի գործունեությունը սփյուռքի մի քանի համայնքներում 1945-1985 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2008, № 2, էջ 125-150, նույնի՝ «Հալեպի հայ համայնքը 1964-1985 թթ.», «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, № 1, էջ 111-131, նույնի՝ «Սիրիայի հայ համայնքը 1960-ական թթ.-1970-ականների սկզբներին», «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, № 2, էջ 214-236, նույնի՝ «Սփյուռքահայ համայնքների ընդհանուր պատկերը 1945 թ.», «Բանբեր Հայաստանի արխիվների», 2010, № 1, էջ 138-157 և այլն:

համայնքների մասին, որտեղ կան նաև Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության մասին փաստաթղթեր⁵:

Կարևոր է Կոմիտեի առաջին նախագահ Վարդգես Համազասպյանի 100-ամյակին նվիրված փաստաթղթերի ժողովածուն, որտեղ ընդգրկված նյութերը հիմնականում վերաբերվում են նրա՝ Կոմիտեն ղեկավարելու ժամանակին⁶:

Օգտագործվել են նաև «Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը» փաստաթղթերի և նյութերի ժողովածուում ներառված նյութերը, որտեղ ներկայացվել են փաստաթղթեր Կոմիտեի ստեղծման ու սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչներին Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումներին հրավիրելու մասին⁷:

Ուսումնասիրության համար որպես աղբյուրներ կարևոր են նաև հայրենի ու սփյուռքահայ մամուլի հրապարակումները: Օգտագործվել են Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի շաբաթաթերթ «Հայրենիքի ծայրում», «Սովետական Հայաստան» ամսագրում, Բեյրութի «Ազդակ», «Արարատ», «Զարթոնք» օրաթերթերում և «Խօսնակ» ամսագրում, Կահիրեի «Արև», «Զահակիր», «Յուսաբեր» օրաթերթերում, Նյու Յորքի «Երիտասարդ Հայաստան», «Լրաբեր» օրաթերթերում, Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում, Լոս-Անջելեսի «Նոր օր» եռօրյա թերթում և այլ պարբերականներում հրատարակված նյութեր:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը ամբողջությամբ և մասամբ դարձել է մի շարք հետազոտողների ուսումնասիրության թեման: Թեմային ընդհանուր առմամբ խիստ հետաքրքրական ու կարևոր աշխատության մեջ անդրադարձել է Հ. Մելիքսեթյանը⁸: Հեղինակն հետազոտել է Կոմիտեի գործունեությունը, բացահայտել գործունեության կարևոր ծրագրերը, բայց առանց մանրամասնությունների մեջ խորանալու և հիմնականում նկարագրության սկզբունքով: Հեղինակի վրա ազդեցություն է թողել նաև խորհրդային մոտեցումը սփյուռքի նկատմամբ, երբ այնտեղ գործող քաղաքական հոսանքները բաժանվում էին «առաջադիմականների» և «հետադիմականների»: Սրանով հանդերձ Հ. Մելիքսեթյանի աշխատությունը կարևոր է հետազոտողների համար, հատկապես հայրենադարձության, խորհրդային շրջանի ավարտին հայրենիք-սփյուռք հարաբերությունների սերտացման հարցերով:

Կոմիտեի աշխատանքների տարբեր ուղղություններին են նվիրված Վ. Համազասպյանի երկու տեղեկատվական բնույթի գրքուկները⁹, որտեղ ներկայացված են կարևոր փաստեր հայրենիք-սփյուռք կապերի և Կոմիտեի կողմից պարզևատրված

⁵ Տե՛ս «Լիբանանահայ համայնքը 1915-1990 թվականներին (ըստ արխիվային փաստաթղթերի)», խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2017, «Իրաքահայ համայնքը 1915-1990 թվականներին (ըստ արխիվային փաստաթղթերի)», խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2018:

⁶ Տե՛ս «Հայրենիք-սփյուռք. կամրջող անուն՝ Վ. Համազասպյան», կազմ. Ս. Միրզյան և Մ. Մարտիրոսյան, Ե., 2011:

⁷ Տե՛ս «Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը», փաստաթղթերի և նյութերի ժողովածու», խմբ. Ա. Հարությունյանի, Ե., 2005:

⁸ Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985:

⁹ Տե՛ս Համազասպյան Վ., Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Ե., 1980, նույնի «Հայրենիքի պարզևատրված սփյուռքահայ գործիչներին», Ե., 1984:

սփյուռքահայերի մասին: Հեղինակի մեկ այլ հետաքրքրական մենագրությունը նվիրված է Հայկական բարեգործական ընդհանուր միության և հայրենիքի միջև կապերին¹⁰:

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների 100 տարվա (1918-2018 թթ.) պատմությանն է նվիրված Ա. Եղիազարյանի, Մ. Անանյանի և մյուս հեղինակների աշխատությունը¹¹, որտեղ առանձին բաժին կա՝ նվիրված Կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններին: Կոմիտեի գործունեության մասին հետաքրքրական են նաև Ա. Եղիազարյանի մյուս հետազոտությունները¹², որոնցում հեղինակը կարևոր դիտարկումներ է կատարում Կոմիտեի գործունեության գերակա ուղղությունների վերաբերյալ:

Աշխատանքում օգտագործվել են նաև Մերձավոր Արևելքի հայ համայնքներին նվիրված աշխատություններ¹³, որոնք նպաստել են Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների վերաբերյալ պատմական կարևոր փաստերի լուսաբանմանը:

Օգտագործվել են նաև սփյուռքին և հայրենիք-սփյուռք հարաբերություններին նվիրված մի շարք աշխատություններից, որոնք խնդիրն վերաբերվում են մասամբ, բայց կարևոր են սույն աշխատանքի ամբողջացման համար¹⁴:

¹⁰ Տե՛ս՝ Կամազասյան Վ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Ե., 2001:

¹¹ Տե՛ս՝ Եղիազարյան Ա., Անանյան Մ. և այլք, Հայրենիք-սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Ե., 2017:

¹² Տե՛ս՝ Եղիազարյան Ա., Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները, «Պատմություն և հասարակագիտություն», տարեգիրք, 2015, № 1, էջ 59-76, նույնի՝ «Հայրենիք-սփյուռք հարաբերությունների գերակա ուղղությունները (1960-ական թվականներից մինչև օրս)», «Հայագիտության հարցեր», 2016, № 3, էջ 96-105, նույնի՝ «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և սփյուռքայությունը», «Սուրիոյ հայերը» գիտաժողովի նիսիներ (24-27 մայիս 2015), Պէյրուս, 2018, էջ 361-382:

¹³ Տե՛ս՝ Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ (հանրագիտարան լիբանանահայ գաղութի), Բ. հատոր, 1920-1980 շրջան (պատկերագրող), Լիբանանահայ նորոգ գաղութին կազմատրումը եւ զանազան հաստատությունները, եկեղեցի, դպրոց, եկն, Պէյրուս, 1981, Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ (հանրագիտարան լիբանանահայ գաղութի), Գ. հատոր (պատկերագրող), 1920-1980 շրջան, Պէյրուս, 1981, Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ (հանրագիտարան լիբանանահայ գաղութի), Դ. հատոր (պատկերագրող), 1920-1980 շրջան, Ֆերլոն, 1983, Տագֆեսան Ա., Լիբանանի հայօճախը, գիրք Ա., Համարկումին խաչուղիները (1920-2005), Պէյրուս, 2015, Ֆիշենկեան Ա., Սուրիոյ հայ համայնքի պատմութիւը 1946-1970 թթ., Ե., 2018, Փաշայան Ա., Հարոյությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Ե., 2011, Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Ե., 1978, Ալայօյանեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը), Գահիրէ, 1960, Խաչատրյան Ա., 1952 թվականի հուլիսի 23-ի եգիպտական հեղափոխությունը և հայերը, «Կանթոն» գիտական հոդվածների ժողովածու, № 3, էջ 109-116, նույնի՝ «Եգիպտոսի հայ համայնքը 1970-1981 թվականներին», «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, № 3, էջ 49-55, Օհանեան Ս., Իրաքի հայ համայնքը 20-րդ դարում, Ե., 2016, Աճեմեան Հ., Յորդանան: Հայերը Յորդանանի մէջ, Լոս Անճելիս, 1989:

¹⁴ Տե՛ս՝ Ոսկանյան Ա., Սփյուռքահայության թվականակազմը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, № 9, էջ 47-51, նույնի՝ «Սփյուռքահայության թվաքանակի դինամիկան 1962-1986 թթ.», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, № 11, էջ 48-50, Դալլաքյան Կ., Հայկական սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 2004, նույնի՝ «Հուշապատում (ղեմքեր, իրողություններ, մտորումներ)», Ե., 1998, Միրզախանյան Ռ., Հայրենիք-սփյուռք մշակութային կապերը 1956-1966 թթ.», «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, № 1, էջ 135-146, նույնի՝ «Հայրենիք-սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին», «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, № 2, էջ 209-218, Պետրոսյան, Ք., Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2016, № 3, էջ 86-98, Дятлов В., Мелконян Э., Армянская Диаспора: очерки социокультурной типологии, Е., 2009, Санджян А., Армянские общины в условиях гражданской войны (сравнение Ливана и Сирии), «Диаспоры» независимый научный журнал, 2015, № 9

Ներկայացված գրականության տեսությունից պարզ է, որ Կոմիտեի համագործակցությունը Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայաշատ համայնքների հետ տարբեր ուղղություններով և անհրաժեշտ խորությամբ մինչև այժմ չի ուսումնասիրվել, չնայած, որ հայկական սփյուռքի ամենից կազմակերպված, բայց նաև վտանգված համայնքները հենց նրանք էին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 170 էջ:

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, կիրառված մեթոդներն ու գիտական նորույթը, օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին

գլխի(«Հայրենիք-սփյուռքկապերի վերականգնումը երկրորդ աշխարհամարտից հետո Ասփյուռքահայության հեղինակության կապի կոմիտեի ստեղծումը») **առաջին ենթագլխում** («Կոմիտեի ստեղծումը և գործունեության գերակա ուղղությունները») ներկայացվել է երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ-ի ղեկավարության՝ հայկական սփյուռքի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, որի արդյունքը եղավ Արտասահամյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերության ստեղծումը 1944 թ.: Համառոտակի ներկայացվել են Ընկերության գործունեության նպատակները, հիմնական ուղղությունները: Արժևորված է Ընկերության կատարած աշխատանքը հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման գործում:

Այնուհետև մանրամասնորեն վերլուծվել է Կոմիտեի ստեղծման գործընթացը, դրանում խորհրդահայ մտավորականության մասնակցությունը, Կոմիտեի որդեգրած նպատակներն ու խնդիրները և կարևոր այլ իրողություններ:

Ընդհանրականորեն ներկայացվել է Կոմիտեի գործունեությունը 1964-1991 թթ.: Ներկայացվել են հատկապես Կոմիտեի գործունեության գերակա ուղղություններով իրականացված աշխատանքներն ու ձեռք բերված արդյունքները: Բերվել են տվյալներ ու իրողություններ, որոնք գիտական հանրությանն են ներկայացվում առաջին անգամ:

Երկրորդ ենթագլխում («Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ Կոմիտեի համագործակցության խնդիրները») վերլուծվել են այն հիմնական կազմակերպչական և գաղափարախոսական խնդիրներն ու խոչընդոտները, որոնց առնչվում էր Կոմիտեն Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ հարաբերություններում: Անդրադարձ է կատարվել չորս խնդիրների՝ ա) խորհրդային ղեկավարության կողմից հարուցված կազմակերպչական խնդիրներին, բ) Կոմիտեի գործունեության գաղափարաբանական սահմանափակումներին, գ) համայնքներում տիրող իրավիճակին և դ) տարածաշրջանում մերթընդմերթ սրվող լարվածությանը: Լուսաբանված է այն իրողությունը, որ չնայած նշված խնդիրներին,

1-2, c. 55-88, Derderian-Aghajanian A., Armenians' Dual Identity in Jordan, International Education Studies, 2009, Vol. 2, No 3, p. 34-41.

Կոմիտեն ընդհանուր առմամբ կարողացել է հաջողությամբ իրականացնել իր ծրագրերը հայկական համայնքներում:

Երկրորդ

գլխի

(«Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համագործակցությունը Լիբանանի և Սիրիայի հայ համայնքների հետ») **Երկու ենթազույլաներում** համապատասխանաբար ներկայացված են Կոմիտեի կապերը Լիբանանի և Սիրիայի հայ համայնքների հետ:

Սկզբում ներկայացվել է Լիբանանի հայ համայնքում տիրող իրավիճակը Կոմիտեի գործունեության շրջանում և քաղաքացիական պատերազմի ազդեցությունը հայ համայնքի վրա: Լուսաբանված է այն հսկայածավալ միջոցառումների ծրագիրը, որ իրականացրեց Կոմիտեն՝ աղետյալ լիբանանահայությանն աջակցելու համար: Մանրամասնորեն լուսաբանվել են այդ տարիներին Կոմիտե-Լիբանանի հայ համայնք կապերը, դրանց զարգացումը և Կոմիտեի միջոցով Խորհրդային Հայաստանից Լիբանան և հակադարձ ուղղությամբ տեղի ունեցած փոխադարձ այցելությունները: Բերված են նաև թվային և բովանդակային տվյալներ Կոմիտեի աջակցությամբ խորհրդահայ բուհերում ուսանող լիբանանահայ երիտասարդների, Խորհրդային Հայաստանում վերապատրաստման դասընթացների մասնակցած լիբանանահայ ուսուցիչների և խորհրդահայ պիոներ ճամբարներում հանգիստ անցկացրած լիբանանահայ պատանիների մասին:

Ինչ վերաբերվում է սիրիահայ համայնքին, ապա ներկայացվել են Կոմիտեի գործունեության շրջանում համայնքի կառուցվածքը, այնտեղ գործող կազմակերպությունները, Կոմիտեի վերաբերմունքը այդ կազմակերպություններին, դրանց ստորաբաժանումը «առաջադիմականների» և «հետադիմականների», Կոմիտեի միջոցով Խորհրդային Հայաստանից Սիրիա և հակադարձ ուղղությամբ տեղի ունեցած փոխայցելությունները, ինչպես նաև սիրիահայ համայնքին Կոմիտեի աջակցության ձևերը: Ի վերջո, այս անգամ արդեն սիրիահայ համայնքի առումով, հստակեցվել են Կոմիտեի աջակցությամբ Երևանի բուհերում սովորած սիրիահայ երիտասարդների, Խորհրդային Հայաստանում վերապատրաստված սիրիահայ ուսուցիչների և խորհրդահայ պիոներ ճամբարներում ամառային հանգիստ անցկացրած սիրիահայ պատանիների մասին թվային և բովանդակային տվյալները:

Խոսվել է նաև Կոմիտեի գործունեության տարիներին Լիբանանի և Սիրիայի հայ համայնքներից տեղի ունեցած հայրենադարձության մասին:

Երրորդ

գլխի

(«Իրաքի,

Քուվեյթի,

Հորդանանի և Եգիպտոսի հայ համայնքները Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ծրագրերում») **Երեք ենթազույլաներում** համապատասխանաբար ներկայացվել են Իրաքի, Հորդանանի և Եգիպտոսի հայ համայնքներում Կոմիտեի գործունեության շրջանում առկա իրավիճակը, համայնքներում գործող կառույցներն ու կազմակերպությունները, դրանց նկատմամբ Կոմիտեի վերաբերմունքը, Կոմիտեի հետ կապերի հաստատումը, կապերի զարգացումը, իրականացվող ծրագրերը, փոխայցելությունները, առաքումները և այլն: Ըստ համայնքների լուսաբանվել են Կոմիտեի աջակցությամբ խորհրդահայ բուհերում սովորող երիտասարդների, Խորհրդային Հայաստանում վերապատրաստված ուսուցիչների և խորհրդահայ պիոներ ճամբարներում հանգիստ անցկացրած պատանիների մասին թվային և բովանդակային

տվյալները: Իսուվել է նաև Կոմիտեի գործունեության տարիներին նշված երկրների հայ համայնքներից տեղի ունեցած հայրենադարձության մասին:

Առանձին ենթագլխում կատարվել է նաև Կոմիտեի և Քուլեյթի նորաստեղծ հայ համայնքի կապերի քննություն, որով մի կողմից լուսաբանվել է համայնքի ձևավորման պատմությունն ու իրավիճակը 1960-1980-ական թթ., իսկ մյուս կողմից՝ Կոմիտեի հետ համագործակցությունը:

Եզրակացությունում ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները:

- Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը մեծ իրադարձություն էր թե՛ Խորհրդային Հայաստանի և թե՛ սփյուռքի կյանքում, որով հայրենիք-սփյուռք կապը ստացավ համակարգված բնույթ, իսկ հայրենիքի աջակցությունը սփյուռքահայ համայնքներին դարձավ նպատակային:

- Կոմիտեի ստեղծման ժամանակաշրջանում խորհրդահայ պետական և մտավորական շրջանակներում հասունացել էր սփյուռքի հետ կապերի սերտացման, այնտեղ հայապահպանությանը նպաստելու և այդ նպատակներով Խորհրդային Հայաստանում համապատասխան կառույցի ստեղծման գաղափարը: Պատահական չէ, որ Կոմիտեի հիմնադրման գործին մասնակցել են այդ շրջանի հայտնի հայ մտավորականները:

- Կոմիտեն իր գործունեության ընթացքում ստացել է ՀԽՍՀ-ի բարձր ղեկավարության աջակցությունը, որը հնարավորություն է տվել համեմատաբար ազատ ընտրել համագործակցության նպատակներին հասնելու արդյունավետ ճանապարհներ: Սակայն դա չէր նշանակում, որ սահմանափակումներ ընդհանրապես չկային: Կոմիտեի ղեկավարությունը հաճախ ստիպված էր լինում լուծել տարաբնույթ խնդիրներ, որոնք առաջանում էի կազմակերպչական ու գաղափարաքաղաքական սահմանափակումների պատճառով: Այդ ամենով հանդերձ Կոմիտեն կարողացավ մեծ ներդրում ունենալ հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման մեջ՝ իր վրա վերցնելով այդ կապերի միջնորդի պատասխանատու դերը:

- Կոմիտեի գործունեության մեջ հատկապես կարևոր էին հարաբերությունները Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների հետ, քանի որ վերջիններս, և հատկապես Լիբանանի ու Սիրիայի հայ համայնքները, իրենցից ներկայացնում էին այն ժամանակաշրջանի հայկական սփյուռքի կարևոր կենտրոնը:

- Տարածաշրջանի հայ համայնքների հասարակական-քաղաքական հոսանքները խորհրդային ղեկավարության կողմից բաժանվում էին «առաջադիմականների» ու «հետադիմականների», որը Կոմիտեի գործունեության մեջ լուրջ խոչընդոտներ էր ստեղծում՝ ստիպելով կարևոր ներուժը վատնել ներհայկական պայքարի և «առաջադիմականներին» ընդդեմ «հետադիմականների» աջակցելու վրա:

- Կոմիտեն իր գործունեության ողջ շրջանում Մերձավոր Արևելքում հանդիպել է դժվարին խնդիրների, որոնք եղել են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի: Ներքին խնդիրները վերաբերվում էին խորհրդային ղեկավարության հարուցած գաղափարական ու կազմակերպական խոչընդոտներին, համայնքում տիրող իրավիճակից առաջ եկած հիմնահարցերին, իսկ արտաքին խնդիրները՝ Մերձավոր Արևելքի արաբական պետությունների մասնակցությամբ տեղի ունեցող տարածաշրջանային հակամարտությունների հետևանքով սկիզբ առած ճգնաժամերին:

• Ի պատիվ Կոմիտեի ղեկավարության և խորհրդահայ իշխանությունների՝ պետք է նշել, որ մերձավորարևելյան արաբական պետությունների հայ համայնքների հետ կապերը պահվում էին նույնիսկ պատերազմական իրավիճակի սրման ժամանակ: Համագործակցելով անընդհատ պատերազմական վիճակում գտնվող տարածաշրջանի հայ համայնքների հետ՝ Կոմիտեն անհրաժեշտության դեպքում իր վրա էր վերցնում մարդասիրական օգնության կազմակերպումը վտանգված հայ համայնքի համար, որի լավագույն օրինակը քաղաքացիական պատերազմի ժամանակ Լիբանանի հայ համայնքին և Լիբանանի ժողովրդին օգնելն էր:

• Կոմիտեն իր աշխատանքները սկսեց առանձին համայնքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրմամբ՝ այնտեղ տիրող իրավիճակին մանրամասնորեն ծանոթանալու, խնդիրները վերհանելու և լուծումներ գտնելու նպատակով: Թեև այդ տեղեկանքները երբեմն ունեն սուբյեկտիվ բնույթ և ոչ միշտ են ճշտորեն արտահայտում առանձին համայնքում տիրող իրավիճակը, բայց ընդհանուր առմամբ կայուն վերլուծական հիմք են ստեղծել Կոմիտեի արդյունավետ գործունեության համար:

• Հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման համար ամուր հենարան են համարվել փոխադարձ կապերը, որոնք աճել են Կոմիտեի գործունեության շրջանում: Կոմիտեն Մերձավոր Արևելքի հայ համայնքներում կապեր էր հաստատում «առաջադիմական» կուսակցությունների, բարեգործական և հայրենակցական միությունների, այլ կազմակերպությունների ու անհատ գործիչների հետ՝ դրանց հաղորդելով մշտական բնույթ:

• Կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններից մեկը փոխադարձ այցելությունների կազմակերպումն էր: ՀԽՍՀ-ից սփյուռք էին ուղարկվում կրթության ու մշակույթի գործիչներ, արվեստագետների և գիտնականների խմբեր՝ միջոցառումների մասնակցելու համար: Միևնույն ժամանակ հայրենիքում հյուրընկալվում էին սփյուռքահայ հասարակական և մշակութային գործիչներ Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքներից: Փոխադարձ այցելությունների նպատակը երբեմն ճանաչողական էր, իսկ երբեմն ուղղված սփյուռքահայ մշակույթի տարբեր գործիչների (գրողներ, արվեստի գործիչներ, գիտնականներ) գործունեությանն աջակցելը, երբ կազմակերպվում էին առանձին անհատի գործունեությանը նվիրված երեկույթներ կամ այլ բնույթի միջոցառումներ հայրենիքում:

• Խորհրդային Հայաստանում տարբեր միջոցառումների անցկացումը լավ առիթ էր Կոմիտեի համար՝ հայրենիք հրավիրելու գործիչներ Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքներից: Այդ կերպ Կոմիտեն կատարում էր իր վրա դրված գաղափարաքաղաքական պահանջը՝ իրականացնելու խորհրդային կարգերի քարոզչություն՝ երկրի նվաճումները սփյուռքահայերին հայտնի դարձնելու համար: Կոմիտեն ստիպված էր լինում երբեմն սփյուռքում իր «առաջադիմական» գործընկերների աջակցությամբ կազմակերպել միջոցառումներ, որոնք ընդհանուր առմամբ սփյուռքում պահանջված չէին: Նման միջոցառումներից կարելի է նշել հատկապես Վ. Լենինի 100-ամյակի միջոցառումները, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պարբերական միջոցառումները:

• Կոմիտեի գործունեության մյուս կարևոր ուղղությունը մերձավորարևելյան արաբական պետությունների հայկական դպրոցներին աջակցելն էր: Դպրոցները ապահովվում էին դասագրքերով, այլ գրականությամբ և բնագիտական

լաբորատորիաներով: Դպրոցներին աջակցելու մյուս ձևը Կոմիտեի ջանքերով ՀԽՍՀ-ում կազմակերպվող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին քննարկվող հայ համայնքներից հարյուրավոր ուսուցիչների մասնակցությունը ապահովելն էր: Դրանով Կոմիտեն նպաստում էր սփյուռքում հայ դպրոցի գոյատևմանը և մրցունակությանը, իսկ արդյունքում՝ նաև հայապահպանությանը:

- Սփյուռքահայ երիտասարդությանը հայրենիքի շուրջ համախմբելու նպատակով ամեն տարի Մերձավոր Արևելքից հարյուրավոր հայ դպրոցականներ իրենց հանգիստն էին անցկացնում հայրենիքում՝ վերջինիս հետ հետագայում հաստատելով մշտական կապ: Կոմիտեն նաև աջակցում էր, որ ամեն տարի բազմաթիվ երիտասարդներ մերձավորարևելյան հայ համայնքներից գան հայրենի բուհերում ուսանելու: Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների երիտասարդության հետ աշխատանքների արդյունքում խորհրդահայ բուհերի բազմաթիվ շրջանավարտներ հեղինակություն ու համբավ ձեռք բերեցին իրենց բնակության երկրում և վերադարձից հետո դարձան Կոմիտեի գործընկերը:

- Կոմիտեն հնարավորությունների սահմանում նպաստում էր նաև Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքներից հայրենադարձությանը՝ գլխավորապես զբաղվելով այդ գործընթացի, նրա արդյունքերի և հայրենադարձների կենսակերպի հանրահռչակմամբ:

- Կոմիտեն հաճախ է իր գործունեության դեմ կազմակերպվող արհեստական խոչընդոտների դեմ բողոքել խորհրդահայ իշխանություններին, բայց հիմնականում արդյունք չի ունեցել: Դրանցից մեկն էլ արտասահմանյան գործուղումների կամայական կազմակերպումն էր: Նաև այդ խնդիրը կարգավորելու նպատակով 1980-ական թթ. Կոմիտեի գործունեության առանցքը դարձան համահայկական տարբեր հավաքները, որոնց մասնակցում էին մերձավորարևելյան հայ համայնքերի տասնյակ ներկայացուցիչներ:

- 1988 թվականից սկսած Կոմիտեն սկսեց զբաղվել Ադետի գոտուն Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների կողմից աջակցության կազմակերպման հարցերով, ինչպես նաև Ադրբեջանում հայերի նկատմամբ իրականացված բռնությունների հանրահռչակման և Հայ Դատի հարցում հայրենիք-սփյուռք համագործակցության եղանակների մշակման աշխատանքներով՝ դրանով իսկ նպաստելով հայրենիք-սփյուռք հարաբերությունների նոր փուլի սկզբնավորմանը:

- Կարելի է վստահորեն ասել, որ պատմական դժվար ժամանակամիջոցում և խնդիրներով լեցուն տարածաշրջանում ու պետություններում բնակվող հայության հետ համագործակցությունը Կոմիտեն իրագործեց մեծ պատասխանատվությամբ: Դրա շնորհիվ Կոմիտեի հիմնական առաքելությունը՝ աջակցությունը հայ համայնքներին հայապահպանության հարցում, պսակվեց հաջողությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մերձավոր Արևելքում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության որոշ խնդիրների շուրջ (1964-1985 թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2017, էջ 224-229:
2. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Հորդանանի հայ համայնքը, «Պատմություն և հասարակագիտություն» տարեգիրք, 2018, էջ 84-92:
3. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի համագործակցությունը Լիբանանի հայ համայնքի հետ (1964-1985), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2018, էջ 261-270:
4. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և իրաքահայությունը 1964-1985 թթ., «Էջմիածին», 2018, սեպտեմբեր (Թ), էջ 115-130:
5. Սիրիահայ համայնքը և սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն 1964-1985 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 1, էջ 110-127:
6. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Եգիպտոսի հայ համայնքը, «Գիտական Արցախ», 2019, № 1, էջ 372-381:

ОВСЕПЯН МЕЛИК ОВСЕПОВИЧ

СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКИМИ ОБЩИНАМИ АРАБСКИХ СТРАН БЛИЖНЕГО ВОСТОКА В 1964-1991 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 10-ого марта 2020 года, в 14⁰⁰ на заседании специализированного совета по истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основной целью диссертации является исследование приоритетных направлений сотрудничества Комитета по культурным связям с армянами Диаспоры с армянскими общинами арабских стран Ближнего Востока в 1964-1991 гг.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы. Во введении обоснованы важность и актуальность темы исследования, подчеркнута научная новизна работы, указаны цели и задачи, поставленные перед автором, проанализирована использованная литература.

В первой главе диссертации (**“Взаимоотношения Родина-Диаспора после второй мировой войны и создание Комитета по культурным связям с армянами Диаспоры”**) изучен процесс становления взаимоотношений Родина-Диаспора в 1940-1960 гг. Предметами исследования стали: предшественник Комитета-Армянское общество культурных связей с зарубежными странами (АОКС), процесс создания Комитета и основные направления его деятельности в 1964-1991 гг., а также проблемы, с которыми сталкивался Комитет.

В процессе сотрудничества с ближневосточными армянскими общинами Комитет столкнулся с серьезными проблемами организационного и идеологического характера, а также проблемами, связанными со сложной ситуацией в армянских общинах и в регионе в целом. Деятельность Комитета иногда зависела от решений Советского комитета по культурным связям с соотечественниками за рубежом. Что же касается проблем идеологического характера, то Комитету приходилось сотрудничать только с «прогрессивными» организациями Диаспоры.

Во второй главе диссертации (**«Сотрудничество Комитета по культурным связям с армянами Диаспоры с армянскими общинами Ливана и Сирии»**) объектом исследования стали взаимоотношения Комитета с двумя наиболее значимыми армянскими общинами Диаспоры. На примере армянской общины Ливана обоснован тот факт, что Комитет с первых дней своего существования столкнулся с проблемами, которые по сути предопределили направления его деятельности. В результате даже в

экстремальных ситуациях, таких как гражданская война в Ливане, Комитет всеми силами помогал бедствующим общинам Диаспоры. Комитет организовал обширную гуманитарную помощь организациям армянской общины Ливана.

Комитет также содействовал армянской общине Сирии, поддерживая ее культурные, социальные и образовательные инициативы.

В течении двух десятилетий Комитет содействовал учебе в вузах Советской Армении армянской молодежи из Ливана и Сирии, организовал отдых детей в лагерях и участие учителей на ежегодных курсах повышения квалификации. В течении 1960-1970 гг. тысячи армян из Ливана и Сирии с помощью Комитета были репатриированы в Советскую Армению.

В третьей главе диссертации ("**Взаимоотношения Комитета по культурным связям с армянами Диаспоры с армянскими общинами Ирака, Кувейта, Египта и Иордании**") представлен анализ ситуации в армянских общинах Ирака, Кувейта, Египта и Иордании во время деятельности Комитета, процесс возникновения связей между Комитетом и этими общинами, взаимные визиты, оказание помощи, организация курсов повышения квалификации для учителей из общин в Советской Армении, содействие учебе представителей армянской молодежи в вузах Еревана, организация отдыха детей в пионерских лагерях и тд.

Несмотря на то, что армянские общины Иордании и Кувейта незначительные, Комитет сотрудничал с ними по всем направлениям деятельности, включая общественные, культурные и образовательные сферы.

Регулярно из Советской Армении в вышеуказанные страны прибывали известные деятели науки и культуры, журналисты и общественные деятели. В свою очередь в Советской Армении побывали представители армянской общин этих стран.

В заключении диссертации представлены все основные выводы исследования, которые позволяют считать общий тезис об эффективности сотрудничества Комитета с армянскими общинами арабских стран Ближнего Востока подтвержденным.

HOVSEPYANMELIK HOVSEP

COOPERATION OF THE COMMITTEE OF CULTURAL RELATIONS WITH THE DIASPORA ARMENIANS WITH THE ARMENIAN COMMUNITIES OF THE MIDDLE EAST ARAB COUNTRIES IN 1964-1991.

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on Mart 10, 2020, at 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyanave. 24/4).

SUMMARY

The main purpose of the dissertation is to study the priority directions of cooperation between Committee of cultural relations with the Diaspora Armenians and Armenian communities of the Middle East Arab countries in 1964-1991.

The PhD thesis consists of an introduction, three chapters, conclusion and list of used sources and literature. The importance and relevance of the research topic argued in the introduction, the scientific novelty of the work emphasized, the goals and objectives set by the author presented, an analyze of used sources and literature is done.

In the first chapter of the dissertation (“**Homeland-Diaspora relations after the Second World War and the creation of the Committee of Cultural Relations with the Diaspora Armenians**”) explored the process of establishing relationships between the Homeland and Diaspora in 1940-1960. The subjects of the study were: the predecessor of the Committee-Armenian society of cultural relations with foreign countries, founding process of the Committee and the main directions of its activity in 1964-1991, as well as the problems encountered by the Committee.

During the process of the cooperation with Armenian communities of the Middle East, the Committee faced serious organizational and ideological problems, as well as problems related to the difficult situation in the Armenian communities and in the region as a whole. The activity of the Committee sometimes depended on the decisions of the Soviet committee of cultural relations with compatriots abroad. As for ideological problems, the Committee had to cooperate only with “progressive” organizations of the Diaspora.

In the second chapter of the dissertation (“**Cooperation of the Committee of Cultural Relations with the Diaspora Armenians with the Armenian communities of Lebanon and Syria**”), the object of the study was the relationship of the Committee with the two most significant Armenian communities of the Diaspora. On the example of the Armenian community of Lebanon, the fact that the Committee from the first days of its existence faced problems that essentially predetermined the directions of its activity is substantiated. As a result even in extreme situations, such as the civil war in Lebanon, the Committee by all means

helped the disaster-stricken communities of the Diaspora. The Committee organized extensive humanitarian assistance to organizations of the Armenian community of Lebanon.

The committee also contributed to the Armenian community of Syria, supporting its cultural, social and educational initiatives.

For two decades, the Committee facilitated the study of Armenian youth from Lebanon and Syria at the higher educational institutions of Soviet Armenia, organized recreation for children in camps and the participation of teachers in annual education courses in Soviet Armenia. In the 1960s and 1970s thousands of Armenians from Lebanon and Syria with the help of the Committee were repatriated to Soviet Armenia.

In the third chapter of the dissertation (“**Relations of the Committee of Cultural Relations with the Diaspora Armenians with the Armenian communities of Iraq, Kuwait, Egypt and Jordan**”) presented an analysis of the situation in the Armenian communities of Iraq, Kuwait, Egypt and Jordan during the Committee’s activity, the process of the establishment of relations between the Committee and the communities, mutual visits, assistance, the organization of trainings for teachers from these communities in Soviet Armenia, the facilitation of the study of representatives of Armenian youth at universities of Yerevan, the organization of recreation for children in pioneer camps, etc.

Despite the fact that the Armenian communities of Jordan and Kuwait are small, the Committee cooperated with them in all areas of activity, including social, cultural and educational spheres.

Regularly well-known scientists and cultural figures, journalists and public figures arrived from the Soviet Armenia to the aforementioned countries. In turn, representatives of the Armenian communities of these countries visited Soviet Armenia.

In the conclusion of the dissertation, all the main conclusions of the study are presented, which allows us to consider the general thesis on the effectiveness of the Committee’s cooperation with the Armenian communities of the Middle East Arab countries confirmed.